

ՀՍՍՀ ԳՍ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ  
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ОТДЕЛЕНИЕ ОБЩЕСТВЕННЫХ НАУК АН АРМ. ССР  
ИНСТИТУТ ИСКУССТВ

ԹՈՐՈՍ ԹՈՐՍԱՄԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ  
ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ  
ՋԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ

Թ Ե Ջ Ի Ս Ն Ե Ր

Т Е Ж И С Ы

докладов научной сессии, посвященной  
памяти Тороса Тораманяна

ԵՐԵՎԱՆ 1971 ԵՐԵՎԱՆ

A II  
58703

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Երևան


ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԸ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳԻՐ

1. Պատմական հայ ճարտարապետության բաղմամբաստակ ու անխոնջ հետազոտող Թորոս Թորամանյանը, մեր անցյալի մշակույթի այդ նշանակալից բնագավառին իր լայնածավալ աշխատություններով մատուցել է անզնահատելի ծառայություն:

2. Մեծ է Թ. Թորամանյանից առաջ պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրությանը նվիրված աշխատությունների թիվը: Սակայն նրանցում չկա մի ընդհանուր կարծիք այդ ճարտարապետության մասին՝ խարսխված գիտական խոր ու ճշգրիտ վերլուծության վրա: Այդ առաջին անգամ վիճակվեց կատարել Թ. Թորամանյանին, որը և, ամենայն իրավամբ, հանդիսացավ պատմական հայ ճարտարապետության հիմնադիրը:

3. Թեև իր ստեղծագործական գործունեությունը Թորամանյանը սկսում է որպես նախագծող, սակայն 1903 թ. այցելելով Անի, նա ընկղմվում է վեհաշուք կոթողներով հարուստ այդ հինավուրց քաղաքի դարերի խորքը ու դառնում նրա մշտական ուսումնասիրողը: Թ. Թորամանյանը այնտեղ գտավ իր տարերքը, իսկ Անին՝ իր անխոնջ ուսումնասիրողին: Մեծ է Անիում կատարած նրա հետազոտությունների ծավալը, սակայն շուտով դրանց շրջանակները լայնանում են, ուսումնասիրության են ենթարկվում նշանակալից հուշարձաններ ունեցող Հայաստանի մյուս շրջանները, մասնավորապես բերդենները, իսկ առանձին հուշարձաններից՝ Տեկորի տաճարը, Զվարթնոցը, Գեղարդը և մյուսները:

4. Թ. Թորամանյանի աշխատությունները շատ բարձր են զնահատվել ժամանակակիցների կողմից. Ն. Մառը նրան անվանում էր ճարտարապետության լեզվի առաջին ուսուցիչը:



5. թ. Թորամանյանը ժամանակին մեծագույն ծառայութիւններ է մատուցել նաև Ի. Ստրժիգովսկուն, տրամադրելով նրան ոչ միայն շափագրական, լուսանկարչական և այլ նյութեր, այլ բազում տարիների իր հետազոտութիւնների արդյունքը հանդիսացող բազմաթիւ հայտնագործութիւններ:

6. թ. Թորամանյանը բացի հետազոտութիւններից զբաղվել է նաև հուշարձանների պահպանութեան և վերականգնման հարցերով: Նա իր գործունեութիւնը սկսել է դեռևս Անիի հնագիտական արշավախմբում, ուր մշակվում էին մեթոդոլոգիական սկզբունքներ և ուղիներ հարթվում հուշարձանների վերանորոգման համար:

7. Հայաստանում հնութիւնների պահպանութեան կոմիտեի ստեղծման պահին թ. Թորամանյանը դարձավ նրա եռանդուն հիմնադիրներից մեկը և նրա ամենակտիւ գործիչը:

Ա. ԱՂՊԱԳՈՆՆՈՎԵԼԼՈ  
Միլան

ԹԱՆԱՀԱՏԻ ԲԱԶԻԼԻԿԱՆ ԵՎ ՊԱՅՏԱԶԵՎ ԿԱՄԱՐԻ ԽՆԴԻՐԸ  
ՎԱՂ ՄԻՋՆԱԳԱՐԻ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Թանահատի բազիլիկայի (V դ.) ճարտարապետական մի շարք հատկանիշները հնարավորութիւն են ընձեռում Արևմուտքի վաղ միջնադարի և հատկապես իտալական որոշ հուշարձաններ մեկնաբանելուն:

2. Պայտածե կամարի օգտագործումը շատ տարածված է հայկական ճարտարապետութեան ամենավաղ շրջաններում (IV—VII դդ.):

3. Պայտածե կամարների հաղվադեպ օրինակները, որոնք առկա են էտրուսկական մի քանի դամբարաններում և հռոմեական ուշ շրջանի ճարտարապետութեան մեջ, հետևանք են արևելյան ազդեցութեան:

Վաղ միջնադարից օրինակներ կան Սիրիայում՝ (V—VI դդ.): Փոքր Ասիայում (VI—VII դդ.) և Կապադովկիայում (VIII—IX դդ.): Միջնադարյան Եվրոպայում (Իտալիա, Ֆրանսիա) հանդիպող պայտածե կամարները արևելյան ծագում ունեն, իսկ Իսպանիա՝ այդ ձևը վեցստեղծները բերեցին, որը հետագայում ազդեց երկիրը նվաճող արաբների ճարտարապետութեան վրա: Արար-

ները պայտածև կամարի կոնստրուկտիվ ձևը վերածեցին դեկորատիվ ձևի:

4. Ճարտարապետական այս տարրը որոշ լույս է սփռում Արևելքի և Արևմուտքի, հատկապես Միջերկրականի շուրջը զարգացած մշակույթների փոխազդեցությունների խնդրի, ինչպես և Կենտրոնական Անատոլիայի և Կովկասի շրջանի ճարտարապետության որոշ հարցերի վրա:

Լ. ԲՐԵՏԱՆԻՅԿԻ

Բաքու

ՄՈՒՍՈՒՄԱՆԱԿԱՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԷՐԻ  
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԳԱՐՉ ԿԱՊԻ ԽՆԳՐԻ ՇՈՒՐՋԸ

(Աղբրեջանի և Հայաստանի միջնադարյան հարտարապետության նյութերի հիման վրա)

1. Արտասահմանյան արևելագիտության մեջ, առանձնապես վերջին շրջանի մենագրություններում, նորից լայն տարածում է գտել այն կոնցեպցիան, ըստ որի իսլամն է հանդիսանում այդ կրոնը ընդունած ժողովուրդների գեղարվեստական զարգացման վճռական գործոնը, նա է պայմանավորել մուսուլմանական աշխարհի արվեստի ոճական որոշ ընդհանրությունը: Այս պրոցեսի բնութագրման ժամանակ սովորաբար թերագնահատվում, իսկ երբեմն էլ պարզապես անտեսվում է նախաիսլամական զարգացման ստեղծված և ամրապնդված ճարտարապետական-գեղարվեստական լուրջ ավանդույթների, ինչպես նաև ոչ իսլամական կրոնական աշխարհի արվեստի հետ նրա կապի նշանակությունը:

2. Ն. Մառի, Հ. Օրբելու և սովետական այլ գիտնականների աշխատություններում «մուսուլմանական» և «քրիստոնեական» արևելքի գեղարվեստական մշակույթների փոխազարձ կապի խնդիրը բազմիցս քննության է առնվել, առավելապես ճարտարապետության և արվեստի առանձին հուշարձանների ուսումնասիրության ընթացքում: Սակայն հետազոտողների ուշադրությունը սու-

վորաբար գրավել են արտաքին նմանության գծերը, մինչդեռ առավել ընդհանուր պլանի մի շարք հրատապ հարցեր բավարար չափով չեն ուսումնասիրվել:

3. Խնդրի առաջիկա ուսումնասիրման ընթացքում անհրաժեշտ է հստակորեն դիֆերենցացիայի ենթարկել ճարտարապետական-գեղարվեստական կուլտուրաների փոխադարձ կապի այն երևույթներն ու նմանության գծերը, որոնք կապված են հասարակական, կենցաղային, բնակարանային, պալատական և այլ՝ գերազանցապես քաղաքացիական շենքերի նշանակության հետ:

4. Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի կարևոր, բայց քիչ ուսումնասիրված հարցերին՝ ճարտարապետական-կոնստրուկտորական լուծումների յուրահատկությանը, շինարարության մեթոդների և հարդարանքի տեխնիկայի առանձնահատկություններին, ճարտարապետական ձևակազմության օրինաչափությունների յուրատեսակությանը, համամասնությունների և ներդաշնակության ստեղծման յուրահատկությանը: Այս հարցերի ուսումնասիրությունը կընդլայնի ճարտարապետական կուլտուրաների փոխադարձ կապերի բազմազանության, բնույթի և ուղղության մասին եղած պատկերացումը:

5. Փոխադարձ կապի ուսումնասիրման կարևոր խնդիրը պետք է լինի դրանց անմիջական «կրողների»՝ ճարտարապետական հարդարանքի հեղինակների ու վարպետների մասին եղած աղքատիկ տվյալների ընդլայնումը: Ճարտարապետի արվեստի արժեքը առաջին հերթին որոշվում է նրա ստեղծած գործի ճարտարապետական արժանիքներով: Միաժամանակ նրա մասին տեղեկությունների կարևոր աղբյուրներ կարող են լինել շինարարական արձանագրությունների, ինչպես նաև գրական աղբյուրների տրվյալները:

6. Գեղարվեստական մշակույթների փոխադարձ կապի մասին տեղեկությունների ընդլայնումն ու կոնկրետացումը, իհարկե, չսահմանափակվելով «մուսուլմանական» և «քրիստոնեական» Արևելքի շրջանակներով, թույլ կտան զգալիորեն համալրել, ճշտել, առանձին դեպքերում էլ շտկել համաշխարհային գեղարվեստական զարգացման պրոցեսի մասին արած պատկերացումները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ V—VII ԴԴ. ԳՄԲԵԹԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ  
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

Ճարտարապետական հուշարձանների վերակազմության նախագծերի ստեղծումը ունի գիտական նույնքան մեծ հետաքրքրություն ու կարևորություն, որքան պատմական ու գրական սկզբնաղբյուրների տեքստերի վերականգնումը: Սակայն ավելի քան մեծ է նրանց գործնական նշանակությունը հուշարձանների վերականգնման ու վերանորոգման գործում:

V—VII դդ. գմբեթավոր եկեղեցիների նախնական տեսքի վերականգնման ուղղությամբ կատարած մեր տարիների ուսումնասիրությունը բերել է որոշակի եզրահանգումների:

1. Միջնադարյան Հայաստանում գոյություն են ունեցել նախագծման կատարելագործված ու կանոնիկ սկզբունքներ:

2. V—VII դդ. գմբեթավոր եկեղեցիների նախագծերը ունեցել են կառուցվածքային մոդուլ հավասար գմբեթային քառակուսու մեկ հատվածին ( $1/4$ ,  $1/6$ ,  $1/8$ ,  $1/10$  և այլն):

3. Եկեղեցու հիմնական շափերը՝ երկարությունը, լայնությունը, նեֆերի թռիչքը, ինչպես և ճակատների գլխավոր մասնահատումները արվել է կառուցվածքային մոդուլով, բացառությամբ բացվածքների տեղադրությունից:

4. Հատակագծում դռների, լուսամուտների բացվածքների դասավորությունը ստացվել է երկրաչափական կառուցումներով:

5. Ճակատների հարթությունում ճարտարապետական տարրերի բարձրությունը ստացվել է երկրաչափական կառուցումների միջոցով:

6. Տեսողական խաբուսիկությունը որպես գեղարվեստական արտահայտչականության միջոց, իր դերն է կատարել նախագծերի մեջ որոշ ուղղումներ մտցնելու համար:

7. Ունենալով հուշարձանի թեկուզև ոչ ամբողջական հատակագիծը և ճակատներում մի քանի ծավալների իրական բարձրությունը, հնարավոր է վերականգնել հուշարձանի ամբողջական նախագիծը:

ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՅՅԱԼՈՒՄ  
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ  
ԿԻՐԱՌՎԱԾ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱԹԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայկական բարձրավանդակը դեռ հին անցյալում եղել է բնակավայր: Քարանձավներում ապրող մարդը արդեն ծանոթ է եղել քարին, որը նրա համար եղել է աշխատանքի գործիք, զինք ու շինանյութ:

2. Զարգացման ընթացքում բազմազան է դառնում տարբեր շինանյութերի (կավ, փայտ և այլն) կիրառումը: Կրաշաղախի երկվան գալը հեղաշրջում է առաջացնում շինարարական արվեստի մեջ և հնարավորություն տալիս կրճատել կառուցվող շենքերի պատերի հաստությունը:

3. Հիմքերի, պատերի, կրող կոնստրուկցիաների, ծածկի համար նախատեսված շինանյութերի և այլ նյութերի ստորաբաժանումը վերականգնման աշխատանքների պրակտիկայում հնարավորություն է տալիս ավելի լրիվ օգտագործել դրանց հնարավորությունները:

4. Հնագույն շաղախների ֆիզիկո-մեխանիկական հատկությունների, քիմիական բաղադրության հետազոտության և գրանուլամետրիկ վերլուծության համապատասխան աղյուսակներում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ գոյություն են ունեցել շինարարական որոշ կանոններ, որոնց խստորեն հետևել են:

5. Հնագույն շինությունների պատերի կառուցվածքն անցել է երկար ու բարդ ճանապարհ՝ սկսած կիկլոպյան շոր շարից, կավե լիցքից, շթրժված աղյուսից մինչև եռաշերտ շարը: Կրաշաղախի կիրառումը վերականգնում է կիկլոպյան եղանակով շարված պատի եռաշերտությունը, բայց այստեղ արդեն օգտագործվում են տաշված քարեր և լցանյութ-շաղախներ: որոնց մեջ տափակ դասավորվում են քարի մանր կտորներ:

6. Փայտի, մետաղի և մի շարք այլ նյութերի կիրառումը ուժեղացրել է հուշարձանների ամրությունը: Ներկայումս վերականգնման աշխատանքների ժամանակ դրան նպաստում են նոր շինանյութերը. հիդրոֆորային շաղախները, երկաթբետոնը, սինթետիկ ձյութերը ընդլայնում են նոր շինանյութերի շրջանակը:

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ

ԱՌԱՋԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ

1. Հին Հայաստանի շինարարական տեխնիկայի պատմությունը գիտական գրականության մեջ իր մենագրական լուսաբանումը չգտած թեմա է: Դրա կատարման անհնարինությունը Ք. Քորամանյանի ժամանակներում՝ երբ նոր էր սկսվում հուշարձանների գիտական ուսումնասիրությունն ու փաստացի նյութերի կուտակումը: Գիտնականի առաջնությունը այդ պրոբլեմի լուսաբանման գործում: Շինարարական տեխնիկայի պատմության վերաբերյալ տեղեկությունների առատությունը նրա աշխատություններում:

«Շինանյութերը և դրանց օգտագործման եղանակները Հին Հայաստանում» (1932) հատուկ աշխատությունը և «Ձվարթնոցի կառուցվածքային վերլուծությունը» շմշակված աշխատությունը: Ըստ Ք. Քորամանյանի կառուցվածքների շինարարական-տեխնիկական առանձնահատկությունները (նյութը, կառուցման տեխնիկան, կառուցվածքային տարրերը) հուշարձանի տարեթիվը և ազգային պատկանելությունը որոշելու կարևորագույն հիմքերից մեկն է:

2. Շինարարական տեխնիկայի հարցերի լուսաբանումը հատկապես կապված է Քորամանյանի հետազոտած և ուսումնասիրած հնագույն և IV—XIV դդ. ֆեոդալական ժամանակաշրջանի հուշարձանների հետ: Հնագույն, միջնադարյան ու ժամանակակից հեղինակների (հայ և արտասահմանյան) աշխատություններում նկարագրված տեղեկությունների ներգրավումը:

3. Նյութերը, դրանց մշակման ու կիրառման եղանակները: Բնական քարեր (տուֆ, բազալտ, կրաքար, պեմզա և այլն) և արհեստական քարեր (չթրծված աղյուս, թրծված աղյուս, կղմինդր), շինափայտ (ծառատեսակներ), մետաղ (երկաթ, բրոնզ), շաղախներ, դրանց բաղադրությունը, որակը, պատրաստման եղանակները՝ կավաշաղախ, կավահարդաշաղախ, կրաշաղախ, գիպսաշաղախ, բետոնաշաղախ: Շաղախի բաղադրամասերի՝ կավի, կրի, ավազի (գետավազ, լեռնավազ), խճի որակը:

4. Շինարարական գործիքները (մուրճեր, կացիններ, բահեր, սղոցներ, քլունգներ և այլն), դրանց ձևն ու նշանակումը: Շինա-

րարական փայտամածներ և հարմարանքներ (խարակ, մաղ, աստիճան, լծակներ, ճախարակներ և այլն):

5. Կոնստրուկտիվ հնարանքներ, դրանց կախումը նյութից, նշանակումից, կառուցվածքից և շինարարության ժամանակից: Պատեր՝ հաստատությունը, շարումը աղյուսից և քարից (կարերի կապում, պատի միջուկ): Բացվածքների ծածկումը (հենակներով, կամարներով) և շենքերի ծածկեր (փայտե և քարե հարթ ծածկեր, հազարաշեն, սողմաքաղ, կամարածե, գմբեթածե): Խաշաձևվող կամարածածկեր: Կամարների ձևերը (պայտածե, կիսակլոր, պարզ սլաքածե ու բազմակենտրոն): Հակասեյսմիկ միջոցներ՝ փայտե հորիզոնական կապեր, ձևավոր կարեր կամարներում (Տեկոր): Պատերի միջի բուտաբետոնի նշանակությունը: Տաթևի սյուներ:

6. Շինարարական արտադրության կազմակերպումը: Վարպետների նշանները: Որմնադիրների բաժանումն ըստ կատարած աշխատանքի տեսակի: Նրանց մասնակցությունը հեռավոր վայրերում գտնվող հուշարձանների շինարարությանը:

7. Թ. Թորմանյանը որպես հին Հայաստանի շինարարական տեխնիկայի պատմության ուսումնասիրության պիոներ:

Պ. ԿՈՒՆԵՈ

Հոռմ

ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱԶԻԼԻԿԱՆԵՐ  
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ

1. Հոռմի համալսարանի միջնադարյան արվեստների ինստիտուտի մի քանի աշխատակիցներ 1970 թ. օգոստոս ամսին, պատմական Հայաստան կատարած գիտահետազոտական շրջագայության ժամանակ հայտնաբերել և ուսումնասիրել են վաղմիջնադարյան շրջանին պատկանող երկու շենք, որոնք գտնվում են Վանա լճի հարավ-արևմտյան ափերի Տուղ և Փաշա էլմալի գյուղերում:

2. Այդ շենքերը Վասպուրականի հնագույն կառուցվածքներից են: Նրանց առկայությունն այն շրջանում հաստատում է, որ վաղ միջնադարում Վասպուրականն ուներ արդեն բավական զարգացած ճարտարապետություն:

3. Երկու շենքերը միանալ բազիլիկաներ են և պատկանում են այդ տիպի յուրահատուկ տարբերակին (նման Անիի պալատի և Փարպիի Ծիրանավոր բազիլիկաներին): Տուղի և Փաշա էլմալիի բազիլիկաներում ընդերկայնական զարգացում ունեցող սրահի ներսում պատերին կից կան հզոր որմնասյուներ, որոնք առաջացնում են ուղղանկյուն հատակագծով խորշեր: Վերջիններս ծածկվում են լայն կամարներով, որոնց վրա էլ հանգչում է կառուցվածքի ծածկի թաղը:

4. Շինարարական այս նույն տարրերը հաջորդ դարերում օգտագործվել են ճարտարապետական ավելի բարդ հորինվածքներ, ինչպես օրինակ՝ «գմբեթածածկ սրահներ» կառուցելու համար (Պտղնի, Արուճ):

5. Բազիլիկաների վրա արձանագրություններ շեն պահպանվել: Սակայն պատերի շարվածքի տեխնիկան՝ ճարտարապետական տարրերը՝ խորիսխները, խոյակները և զարդաքանդակները, բնորոշ են վաղ միջնադարի հայ ճարտարապետության հուշարձաններին (Տեկոր, Երեբունյք), որի հետևանքով այդ կառուցվածքները կարելի է թվագրել V դ.:

#### Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՐԼԱՆ

### ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՏՅՈՐԱՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ

1. Հայ ճարտարապետության պատմության գիտական հետազոտության հիմնադիր Թորոս Թորամանյանի ծանրակշիռ գիտական ժառանգությունը՝ ամփոփված նրա «Նյութերի» մեջ, որպես մի հանրագիտարան հայ ժողովրդի շինարարական-ճարտարապետական բազմադարյան հարուստ մշակույթի մասին, ամուր հիմք հանդիսացավ հետագա ուսումնասիրությունների համար:

2. Այդ գործին մեծապես նպաստեց նաև սովետական իշխանության տարիներին Հայաստանում կազմակերպված գիտական արշավախմբերի, հնագիտական պեղումների, հուշարձանների համահավաք ցուցակները, քարտեզներն ու քարտարաններ կազմելու:

շահագրելու և վերանորոգման աշխատանքների հետևանքով կատարված բազմակողմանիորեն հարուստ նյութերը:

3. Պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրությունները նախապես կազմակերպվեցին Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում, արվեստի ու գրականության, նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտներում, իսկ այնուհետև Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնում, Հայկ. ՍՍՀ գա արվեստի, հնագիտության և ազգագրության ինստիտուտներում, Հայաստանի պատմության թանգարանում և այլն:

4. Այդ շնորհակալ գործում որոշակի ներդրում ունեն նաև Միության տարբեր քաղաքներում ապրող գիտնականները (Ն. Տոկարսկի, Ա. Յակոբսոն, Հ. Խալիպաշյան, Յու. Յարալով, Ռ. Աղաբաբյան և ուրիշներ):

5. Պատմական հայ ճարտարապետության նկատմամբ, հատկապես վերջին տարիներին, լայն հետաքրքրություն է առաջացել արտասահմանյան գիտական շրջաններում (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Թուրքիա):

6. Կատարված աշխատանքը անհամեմատ ընդարձակում է հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրության շրջանակները, խորացնում և բազմակողմանի է դարձնում ինչպես ընդհանուր, այնպես էլ մասնակի հարցերի ընդգրկումը:

7. Հայրենական գիտնականների ուսումնասիրություններն ընթացել են հետևյալ ուղղություններով՝

ա) ընդհանուր պրոցեսի շարադրում,

բ) զարգացման առանձին փուլերի հանգամանալից ուսումնասիրություն,

գ) առանձին խնդիրների (կազմավորման, դարաշրջանների հատկանիշների, աշխարհիկ ճարտարապետության, քաղաքաշինության, ճարտարապետական դպրոցների, ժողովրդական բնակարանների ճարտարապետության, հարդարանքի միջոցների և այլն) ուսումնասիրություններ,

դ) առանձին հուշարձանների և հուշարձանախմբերի մոնոգրաֆիկ ուսումնասիրություններ,

ե) հնագիտական պեղումների մասին գրված աշխատություններում բացված ճարտարապետական հուշարձաններին անդրադարձում:

նում իր բարդ հորինվածքով և խորհրդանշանների արտակարգ բազմազանությամբ:

2. Նշված գոտին բաղկացած է երեք, միմյանց հետ սերտորեն առնչվող մասերից: Առաջինը՝ արևմտյան խաչաթևի հորիզոնական քիվերի վրա ձգվող դիմաքանդակների շարքերն են, երկրորդը՝ տաճարի հիմնական ծավալի հորիզոնական քիվերի վրա տեղավորված տոհմանշաններն ու զինանշանները, երրորդը՝ ճակտոնապատերի թեքադիր քիվերի վրա պատկերված կենդանավազքի տեսարանները:

3. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոտու արևմտյան խաչաթևի հատվածները ներկայացնում են Արծրունյաց թագավորական տան զուգահեռ իշխանական տների ավագագույն ներկայացուցիչներին և այդ դիմաքանդակները ոչ մի առնչություն չունեն թատերական դիմակների հետ:

4. Տաճարի ծավալի հորիզոնական քիվերի վրա տեղավորված են բազմաթիվ զինանշաններ և տոհմանշաններ, որոնք մինչև այժմ բացահայտված չեն: Բացառված չէ, որ նրանք ներկայացրել են այն իշխանական տները, որոնց ներկայացուցիչները պատկերված են արևմտյան խաչաթևի քիվերի տակ:

5. Որպես տոհմանշաններ և զինանշաններ հանդես են գալիս կենաց ծառի, մարդու և կենդանիների պայքարի սյուժեներ, ընդ որում, խիստ ակնհայտ է քանդակագործների հեռացումը կանոնիկ կոմպոզիցիաներից և միանգամայն նոր, մինչ այդ անհայտ հորինվածքների մշակումը:

6. Ճակտոնապատերի թեքադիր քիվերի վրա պատկերված կենդանավազքի սյուժեներն իրենց բնույթով սերտորեն առնչվում են իշխանական կենցաղի այնպիսի բնորոշ կողմի հետ, ինչպիսին է որսորդությունը:

7. Այս ուշագրավ գոտին մի կողմից վկայում է. թե ինչպիսի վարդացման էր հասել հայկական հերալդիկան արդեն X դ., իսկ մյուս կողմից՝ հաստատում նրա խիստ որոշակի տեղը տաճարի ամբողջ գեղարվեստական մշակման մեջ:

ՄՈՒՌՆԻԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԷԶՄԻԱՄՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ  
 V ԳԱՐԻ ԳՄԲԵԹԱԿԻՐ ԿԱՌՈՒՅՎԱՍԺՈՒՄ

1. Ճարտարապետական առանձին ձևերի (սյուն, մույթ, կամար, թաղ, գմբեթ և այլն) քարի կոնստրուկտիվ հնարավորությունների յուրահատկության փորձը դարերի ընթացքում ստեղծել է կառուցվածքի առավել ամրության և էմոցիոնալ արտահայտչականության ստուգված, տրամաբանական հորինվածք: Այդ երեվույթը սաղմնավորվելով հեռավոր անցյալում, ակնհայտ է ճարտարապետության վաղ միջնադարի, ինչպես երկաշնական տիպի (բազիլիկալ), այնպես էլ կենտրոնագմբեթ կառուցվածքներում:

2. Կառուցվածքի ամրության, ընդհանուր շինվածքի կոնստրուկցիաների ճշմարտացի լուծման հետ միաժամանակ, ճարտարապետը ձգտել է կառուցվածքի գեղարվեստական արտահայտչականությանը հասնել պատերի պարզ հարթություններին տրվող ճարտարապետական մի քանի ուժեղ շեշտերի և հատկապես, այդ հարթությունների, ինչպես և ներքին տարածական ծավալային հորինվածքի ընդհանուր համաչափությունների ու նրանց մանրամասների փոխադարձ ներդաշնակության միջոցով: Իրոք, ճարտարապետական կառուցվածքի գեղարվեստական արտահայտչականության պայմաններից ու միջոցներից մեկն իրավամբ համարվում է ճարտարապետական երկի մեջ արտահայտված համաչափությունը և դրա շնորհիվ ստեղծված ճարտարապետական ձևերի փոխադարձ պայմանավորվածությունը: Այս տեսակետից, գիտական բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում վաղ միջնադարի հայկական ճարտարապետության մեջ դրսևորված մոդուլային յուրահատուկ համակարգի գոյությունը:

3. Եթե քրիստոնեական վաղ շրջանի բազիլիկալ կառուցվածքներում անջատ կանգնած մույթը, իբրև կոնստրուկտիվ հիմնական կրող մաս, հանդիսացել է հուշարձանի կառուցման մոդուլը և այդ մոդուլի հիման վրա ստեղծվել է բազիլիկայի ամբողջ շինությունը, ապա կենտրոնագմբեթ կառուցվածքի մեջ ելակետը հանդիսացել է հիմնականում շենքի էությունը, նրա կերպարը բնորոշող

գմբեթը, որի շափի հիման վրա և ստեղծվել է գմբեթակիր ամբողջ շինվածքը:


4. Դեռևս 1955-ին, խոսելով Հայաստանի բազիլիկալ կառուցվածքներում բացահայտված մոդուլային համակարգի մասին, նշել ենք «որ միանալ կառուցվածքներում մոդուլը հանդիսանում է թաղակիր կամարի որմնամույթի լայնությունը (Գառնի և այլն), իսկ կենտրոնագմբեթ կառուցվածքներում՝ գմբեթի հիմքի շառավիղը (Ավան, Հոփսիմե, Թալինի փոքր եկեղեցի): Նույն երևույթը նկատվում է նաև Զվարիում՝ Վրացական ՍՍՀ, (տե՛ս Ալ. Սահինյան «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը», Երևան, 1955, էջ 184, նույնը հիշատակված է գրքի ուսուերեն ամփոփման մեջ, էջ 263):

Այդ մասին տես նաև А. А. Саинян, Казахская базилика, автореферат, Ереван, 1951, стр. 19.

Մեր այդ տեսակետը հիշատակված է նաև С. Х. Мнацаканян. „Архитектура армянских притворов“, Ереван, 1952, стр. 128.

5. Այս տեսակետը լիովին հաստատվում է էջմիածնի Մայր տաճարի պեղումներից ձեռք բերված նոր նյութերով: էջմիածնի Մայր տաճարի V դարի վերջերին կատարված վերակառուցման ժամանակ, պահպանելով IV դարի սկզբներին ստեղծված լուսավորչաշեն տաճարի շորս մույթերը՝ նրանց վրա նետվել են գմբեթակիր կամարներ և գմբեթի հիմքի շառավղի շափն ընդունելով մեկ մոդուլ, ամբողջ շենքի հորինվածքը ստեղծել են այդ մոդուլի հիման վրա:

6. Այսպիսով, պարզվում է, որ կենտրոնագմբեթ կառուցվածքների հիմքում ընկած մոդուլային համակարգը Հայաստանում գոյություն է ունեցել առնվազն V դ.: Հետագայում կառուցողական այդ սկզբունքը հանդես է գալիս Հայաստանի (ինչպես և Վրաստանի) VI—VII դդ. կենտրոնագմբեթ գրեթե բոլոր կառուցվածքներում (Ավան, Հոփսիմե, Թալինի փոքր եկեղեցի, Ալաման, Զվարի, Աթենի և այլն):




ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՀՈՒՇԱՐՁԱՆ  
ԱՆԻԻ 1911 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՅ

1. Հնագիտական 10-րդ գիտարշավի ժամանակ Անիում, Աբուլ-Մամբրանի մեծ միմարեթի փլատակների մոտ պեղվեց մի բլուր, որտեղ հայտնաբերվեցին ավերված եկեղեցու մնացորդներ: Կառույցի պահպանված ներքին մասը (բարձրությունը՝ 3,30—3,75 մ) և ցաքուցրիվ ճարտարապետական դետալները թույլ են տալիս վստահորեն պատկերացնել նրա նախկին տեսքը: Արտաքին պատերի ուղղանկյունին (14,40×7,30 մ) ընդգրկում է մի աղոթասրահ, որին արևելքից հարում է բեմի կիսաշրջանաձև արսիզը՝ կողքերից երկու փոքր ավանդատներով: Երկայնակի պատերից դուրս կան երկուական մույթեր, որոնց վրա հենվել են ենթազմբեթային 4 կամարները, որոնք առագաստների հետ միասին հանդիսացել են կտր թմբուկի հիմքը: Գմբեթը վեր է բարձրացել եկեղեցու խաչաձև հորինվածքի կենտրոնի վրա: Պեղված եկեղեցու հորինվածքի այս գծերը թույլ են տալիս այն դասել արդեն V—VI դդ. սահմանադիրին Հայաստանում հայտնի, այսպես կոչված, «գմբեթավոր սրահների» շարքը (Զովունի), որոնք լայն տարածում ստացան երկիրը արաբներից ազատագրելուց հետո:

2. Անիի եկեղեցին արտաքուստ ոչնչով (ուշ որմահեցներից բացի) չի տարբերվում սովորական «գմբեթավոր սրահներից», բայց ներսից այնքան արտասովոր ու յուրատեսակ է, որ լրիվ կարող է համարվել հազվագյուտ կառույց: Նախ և առաջ ուշագրավ է, որ շինարարները վճռականապես հրաժարվեցին ուղղանկյուն հիմքով մույթերից, որոնք ընդունված են եղել «գմբեթավոր սրահներում»: Այստեղ յուրաքանչյուր մույթ բաղկացած է երկու հաստ (մոտ 70 սմ տրամագծով) սյուներից, որոնց վրա հենվում են ենթագմբեթային քառակուսու երկու հարակից կամարները: Երկրորդ արտասովոր առանձնահատկությունը բեմի կիսաշրջանաձև արսիզի կառուցվածքն է, որտեղ պատից դուրս ցցված 9 կիսասյուներ կազմում են յուրատեսակ հարթ որմնախորշեր՝ պրսակված գմբեթարդներով: Միջին սյան կողքերից եղել են երկու

լուսամուտներ: Աբսիդի հարդարանքն ընդգրկում է ամբողջ պատր՝ մինչև թաղը, մինչդեռ մի քանի այլ հուշարձաններում որմնախորշերի գոտին, դրանց միջև բարակ զույգ կիսասյուներով գրավում է կիսաշրջանի միայն ներքևի մասը:

3. Ուսումնասիրվող եկեղեցու բեմի համեմատումը Անիի Գագիկ Առաջինի տաճարի արսիդների հետ ցույց է տալիս, որ հենց վերջինիս հույակապ սյունաշարերն են ոգևորել ճարտարապետին, որը որոշել է իր կառուցած եկեղեցում դրանք մեկնաբանել յուրովի: Գագիկաշենի ազդեցությունը հաստատվում է նաև երկու կառույցների առագաստների բարդ ձևերի նմանությունը և սյուների հիմքերի կողավոր փորագրության սյուժեով, որը նույնպես ընդօրինակված է Գագիկի տաճարից: Այս ամենը հիմք է տալիս 1911 թվականի պեղումների ժամանակ հայտնաբերված եկեղեցին համարել ոչ ուշ, քան XI դ. առաջին կեսի կառուցվածք՝ մերժելով դրա բազմակի վերակառուցումների վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետը: Եկեղեցու արևելյան ծայրի որմնահեցերը ավելացվել են XIII դ. ոչ շուտ:



К. Л. ОГАНЕСЯН  
Ереван

## ТОРОС ТОРАМАНЯН—ОСНОВАТЕЛЬ НАУЧНОГО ИССЛЕДОВАНИЯ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

1. Торос Тораманян, неутомимый исследователь истории армянской архитектуры, своими капитальными трудами внес неоценимый вклад в дело изучения культуры нашего народа.

2. Велико число трудов, посвященных исторической армянской архитектуре, до Тораманяна. Однако в них не было единого, основанного на глубоком научном анализе, мнения об этой архитектуре. Впервые это удалось сделать Т. Тораманяну, который по праву считается основоположником научного исследования исторической армянской архитектуры.

3. Творческую деятельность Т. Тораманян начал как проектировщик, однако, посетив в 1903 году Ани, где величественные развалины столицы Армении произвели на него огромное впечатление, он посвятил себя их исследованию и изучению. Т. Тораманян нашел в Ани свою стихию, а Ани—своего постоянного, и неутомимого исследователя. Огромен объем выполненных им в Ани исследований. Однако вскоре рамки этих исследований расширяются. Он изучает другие районы Армении, также имеющие важные памятники: в частности древнейшие крепостные поселения, а из отдельных памятников предметом его изучения становятся Текорский храм, Звартноц, Гегард и другие.

4. Современники очень высоко ценили результаты работ Т. Тораманяна. Н. Марр, например, называл его первым учителем языка архитектуры.

5. В свое время Т. Тораманян оказал огромные услуги и И. Стржиговскому, предоставив ему не только обмерные чертежи, фотографические и другие материалы, но и все сделанные им многочисленные открытия—результаты его долготных исследований.

6. Кроме исследовательской работы, Т. Тораманяна занимали также вопросы охраны и восстановления памятников. Его деятельность в этой области началась еще в Ани, в его прославленной археологической экспедиции, когда усилиями плеяды блестящих ученых выковывались методологические принципы и проторялись пути восстановления памятников.

7. В период создания в Армении Комитета по охране древностей Т. Тораманян принял самое энергичное участие в этом деле и стал одним из активнейших деятелей Комитета.

А. АЛПАГО-НОВЕЛЛО  
Милан

### **ТАНААТСКАЯ БАЗИЛИКА И ПРОБЛЕМА ПОДКОВООБРАЗНОЙ АРКИ В АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЕ РАННЕГО СРЕДНЕВЕКОВЬЯ**

1. Архитектура Танаатской базилики (V в.) в Зангезуре дает возможность объяснить некоторые особенности памятников раннего средневековья Запада, особенно итальянских.

2. Применение подковообразной арки было распространено в древнейшем периоде армянской архитектуры (IV—VII вв.).

Редкие примеры подковообразной арки, которые встречаются в некоторых этрусских мавзолеях и в римской архитектуре позднего периода, являются следствием влияния востока. Из раннего средневековья имеются примеры в Сирии (V—VI), Малой Азии (VI—VII) и в Каппадокии (VIII—IX). Подковообразные арки, встречающиеся в средневековой Европе (Италия, Франция), имеют восточное происхождение.

А в Испанию эту форму привезли вестготы, и она в дальнейшем повлияла на архитектуру завоевавших эту страну арабов. Конструктивную форму подковообразной арки арабы в дальнейшем превратили в декоративную.

4. Этот архитектурный элемент проливает некоторый свет как на проблему взаимосвязей развитых культур Востока и Запада, особенно стран средиземноморского бассейна, так и на некоторые вопросы архитектурных связей Центральной Анатолии и Кавказа.

В. М. АРУТЮНЯН  
Ереван

### ПОСЛЕТОРАМАНЯНОВСКИЙ ПЕРИОД ИЗУЧЕНИЯ ИСТОРИЧЕСКОЙ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

1. Капитальное научное наследие основоположника научного исследования истории армянской архитектуры Торося Тораманяна, содержащееся в его «Материалах» — этой подлинной энциклопедии многовековой строительно-архитектурной культуры армянского народа, — явилось прочной основой для дальнейших исследований.

2. Этому делу способствовали организованные в советские годы научные экспедиции, археологические раскопки, составление сводных списков памятников, карт, картотек и т. д.

3. Исследования истории армянской архитектуры предварительно были организованы в Комитете по охране исторических памятников Армении, в институтах искусства и литературы и истории материальной культуры, а затем на кафедре архитектуры Ереванского политехнического института, в институтах искусств, археологии и этнографии Академии наук Армянской ССР, в Государственном историческом музее и т. д.

4. В это дело внесли определенный вклад и ученые, живущие в различных городах Советского Союза (Н. Токарский, А. Якобсон, О. Халпахчян, Ю. Яралов, Р. Агабабян и т. д.).

5. Значительный интерес к армянской исторической архитектуре проявляется в зарубежных научных кругах (Италия, Франция, Англия, Ливан, Турция и другие страны), особенно за последние годы.

6. Выполненная работа в высшей степени расширяет рамки изучения армянской исторической архитектуры, углубляет охват как общих, так и частных проблем. Открытая Тораманяном тропа становится теперь широкой дорогой.

7. Исследования отечественных ученых шли по следующим основным направлениям:

а) изложение общего процесса истории армянской архитектуры;

б) обстоятельное изучение отдельных этапов ее развития;

в) исследования отдельных проблем (формирование, характерные черты веков, градостроительство, архитектурные школы, архитектура народного жилища, декоративные средства и т. д.);

г) монографические исследования отдельных памятников и групп памятников;

д) в работах об археологических раскопках отмечались выявленные архитектурные памятники;

е) исследования, посвященные типологии армянских памятников и уточнению времени формирования отдельных типов;

ж) издание популярных брошюр и буклетов об отдельных районах, группах памятников и памятниках.

8. Общие заключения об оценке выполненного и задачах дальнейших исследований.

## К ПРОБЛЕМЕ ВЗАИМОСВЯЗИ АРХИТЕКТУРЫ МУСУЛЬМАНСКОГО И ХРИСТИАНСКОГО ВОСТОКА

(на материале средневекового зодчества Азербайджана  
и Армении)

1. В зарубежном востоковедении, особенно монографиях последнего времени, вновь широко распространена концепция, согласно которой ислам являлся решающим фактором художественного развития воспринявших его народов, обусловив известную стилистическую общность искусства мусульманского мира. В характеристике этого процесса обычно недооценивается, а иногда и игнорируется значение локальных архитектурных художественных традиций, сложившихся и упрочившихся в доисламскую эру, а также его связи с искусством неисламского конфессионального мира.

2. В трудах Н. Марра и И. Орбели, а впоследствии в работах других советских ученых, проблема взаимосвязи художественных культур «мусульманского» и «христианского» Востока неоднократно рассматривалась преимущественно в процессе изучения отдельных памятников архитектуры и искусства. Однако внимание исследователей обычно привлекалось и ограничивалось чертами внешнего сходства, и ряд актуальных вопросов более общего плана изучен недостаточно.

3. В предстоящем изучении проблемы необходима четкая дифференциация явлений взаимосвязи архитектурно-художественных культур и черт сходства, вызванных непосредственным назначением общественно-бытовых, жилых, дворцовых и иных преимущественно гражданских сооружений.

4. Особое внимание должно быть уделено незаслуженно мало исследованным вопросам: специфике архитектурно-конструктивных решений; особенностям методов строительства и техники убранства; своеобразию закономерностей

архитектурного формообразования; оригинальности приемов пропорционирования и гармонизации. Результаты изучения подобных вопросов расширяют представление о многообразии, характере и направленности взаимосвязей архитектурных культур.

5. Важной задачей изучения проблемы взаимосвязей должно быть расширение скудных сведений об их непосредственных «проводниках» — зодчих и мастерах архитектурного убранства. Искусство зодчего определяют, в первую очередь, архитектурные достоинства его творения. Вместе с тем, важным источником сведений о нем могут послужить данные строительной эпиграфики, а также письменных источников.

6. Расширение и конкретизация сведений о взаимосвязях художественных культур, не ограничиваемых, разумеется, пределами «мусульманского» и «христианского» Востока, позволят значительно пополнить, уточнить и в отдельных случаях прокорректировать устоявшиеся представления о процессе мирового художественного развития.

А. А. ЕРЕМЯН  
Ереван

## О ПРИНЦИПАХ ПРОЕКТИРОВАНИЯ АРМЯНСКИХ КУПОЛЬНЫХ ЦЕРКВЕЙ V—VII вв.

Создание проектов реставрации архитектурных памятников представляет такой же большой научный интерес, как и восстановление текстов исторических первоисточников.

Однако трудно переоценить практическое значение проектов реставрации при восстановлении архитектурных памятников.

Для воссоздания первоначального вида ряда памятников были исследованы купольные церкви V—VII вв. с целью выявления принципов их проектирования.

Исследования привели к следующему:

1. В средние века в армянской архитектуре существовали усовершенствованные и канонизированные принципы проектирования.

2. В проектах купольных церквей V—VII вв. имелась определенная модульная система, где модуль сооружения был равен одной части (1/4, 1/6, 1/8, 1/10 и т. д.) подкупольного квадрата.

3. Основные размеры церкви—длина, ширина, пролет нефов, главные членения на фасадах,—без остатка делятся на модуль сооружения; расположение же проемов осуществлено не по модульной сетке.

4. Расположение оконных и дверных проемов в плане определялось при помощи геометрических построений.

5. Расположение отдельных архитектурных элементов на фасадах также определялось геометрическим построением.

6. Проекты корректировались с учетом оптического обмана как средства архитектурной выразительности.

7. Имея неполный план церкви и высоты некоторых ее объемов, можно полностью воссоздать первоначальный проект памятника.

К. Г. КАФАДАРЯН  
Ереван

## К ВОПРОСУ ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ АРХИТЕКТУРЫ АРМЕНИИ

1. Теория архитектуры и в первую очередь ее периодизация имеют важное значение для правильного освещения вопросов доармянской и армянской архитектуры Армении, для безошибочной оценки архитектурных стилей и их направлений и определения эпох и взаимосвязей.

2. Вопросами периодизации истории армянской архитектуры первым занялся еще в самом начале нынешнего века Торос Тораманян. Он создал теорию о подъеме и упадке

средневековой армянской архитектуры. До конца своих дней он систематически перерабатывал и уточнял эту теорию.

3. После смерти Тораманяна (1934 г.) кроме монографий, посвященных отдельным памятникам, вышел ряд работ, в той или иной мере обобщающих историю армянской архитектуры. Хотя в основу этих произведений и положены принципы периодизации Тораманяна, однако каждый из авторов несколько отклонялся от этой теории.

4. Многие авторы начинают изложение истории армянской архитектуры с разных веков и заканчивают ее разными веками.

5. Необходимо разработать теорию, приемлемую для всех исследователей, которая включала бы историю архитектуры, начиная от первобытных времен до наших дней.

6. От прошлых веков в Армении уцелели большей частью церковные здания. Поэтому теория развития архитектуры Тораманяна основана исключительно на исследовании и изучении церковных памятников.

7. В настоящее время с помощью данных археологических раскопок и полевых экспедиций изучаются памятники древнейших времен, урартские, раннеармянские, а также средневековые и более поздних эпох: поселения, замки, крепостные поселения, жилые и общественные здания и другие. Необходимо уточнить их эпохальные признаки и результаты этих работ включить в историю архитектуры.

8. Надо не ограничиваться историей только средневековой архитектуры, но и изучить историю архитектуры Армении начиная с каменного века не как приложение к средневековой архитектуре, как это обычно делается, а как самостоятельный предмет.

9. Необходимо изучить историю армянской архитектуры зарубежных колоний и включить соответствующие главы в общую историю армянской архитектуры.

## ДВЕ НОВЫЕ БАЗИЛИКИ РАННЕГО СРЕДНЕВЕКОВЬЯ В ВАСПУРАКАНЕ

1. Группа сотрудников Института средневековых искусств Римского университета в августе 1970 г. во время научной экспедиции на территории исторической Армении обнаружила и исследовала два сооружения раннего средневековья, находящихся на юго-западном берегу озера Ван, в деревнях Туг и Паша Элмали.

2. Эти сооружения являются одними из древнейших в Васпуракане. Их наличие в данном районе подтверждает тот факт, что в раннем средневековье в Васпуракане уже существовала развитая архитектура.

3. Оба сооружения являются однонефными базиликами и принадлежат к своеобразному варианту этого типа (они схожи по своей композиции с дворцовой базиликой в Ани и Циранавор в Парби). В базиликах Туга и Паша Элмали в вытянутой зальной части устроены мощные пилоны, выступающие из продольных стен и образующие глубокие, прямоугольные в плане ниши. Последние перекрываются отдельно, широкими арками, на которые и опирается свод перекрытия сооружения.

4. В дальнейшем элементы данной композиции были использованы при создании более сложных архитектурных организмов, как например, «купольных залов» (Птгни, Аруч).

5. На базиликах нет строительных надписей. Однако техника кладки стен, архитектурные детали (базы, капители, орнаменты) характерны для памятников армянской архитектуры раннего средневековья (Текор, Ереруйк), на основании чего их можно датировать V веком.

**ПОЯС СИМВОЛИЧЕСКИХ ИЗОБРАЖЕНИЙ АХТАМАРА**

В истории армянской скульптуры иконографическая система Ахтамара является единственной в своем роде. В художественном облике храма каждый из опоясывающих храм пяти скульптурных поясов имеет особое место и ни один из них не повторяет другой.

1. Наименее изученной частью иконографической системы Ахтамара является четвертый пояс, пояс, если можно так выразиться, портретных и геральдических изображений, который выделяется своей сложной композицией и чрезвычайным разнообразием.

2. Упомянутый пояс состоит из трех тесно связанных друг с другом частей. Первая часть—это портретные изображения на горизонтальных карнизах западного крыла храма, вторая—геральдические знаки, размещенные на горизонтальных карнизах основного объема храма, третья—сцены звериного тона, расположенные на наклонных карнизах фронтонов.

3. Изучение показывает, что на западных участках пояса размещены портреты старейших представителей княжеских домов, по всей вероятности, находившихся в родстве с царским домом Арцрунидов. Эти скульптурные портреты не имеют никакого отношения к театральным маскам.

4. На горизонтальных карнизах основного объема храма размещены многочисленные геральдические знаки, которые до сих пор остаются нерасшифрованными. Не исключено, что они представляли те княжеские дома, члены которых изображены под карнизами западного крыла храма.

5. При разработке геральдических знаков использованы традиционные сюжеты борьбы животных, древа жизни, борьбы человека со зверем, при этом вполне очевиден отход скульпторов от канонических форм и появление совершенно новых, до этого неизвестных композиций.

6. Изображенные на наклонных карнизах щипцов сюжеты звериного гона по своему характеру тесно связываются с такой характерной стороной княжеского быта, как охота.

7. Пояс символических изображений Ахтамара с одной стороны свидетельствует о том, какого развития достигла армянская геральдика уже в X веке, а с другой стороны утверждает ее вполне определенное место в общем художественном облике храма.

А. А. САИНЯН  
Ереван

### **МОДУЛЬНАЯ СИСТЕМА В КУПОЛЬНОМ СООРУЖЕНИИ ЭЧМИАДЗИНСКОГО КАФЕДРАЛЬНОГО СОБОРА V ВЕКА**

1. Опыт использования своеобразия конструктивных возможностей камня в отдельных архитектурных формах (колонна, пилон, арка, свод, купол и г. д.) в течение веков создал наиболее проверенную, логическую конструкцию прочности и эмоциональной выразительности сооружения. Зародившись в отдаленном прошлом, это явление имеет место в сооружениях армянской архитектуры раннего средневековья как продольного типа (базиликальных), так и в центрально-купольных.

2. Одновременно с правильным решением прочности сооружения и конструкции всей постройки, архитектор стремился достичь художественной выразительности сооружения путем придания нескольких сильных архитектурных акцентов четким плоскостям стен и, в особенности, путем взаимной гармонии как этих плоскостей, так и общих пропорциональностей внутренних пространственных объемов сооружения и их деталей. И действительно, известно, что одними из условий и средств художественной выразительности архитектур-

ного сооружения по праву считаются выраженные в архитектурном произведении пропорциональности и созданная благодаря этим пропорциональностям взаимная обусловленность. С этой точки зрения представляет исключительный научный интерес существование своеобразной модульной системы, выявленной в армянской архитектуре раннего средневековья.

3. Если в базиликальных сооружениях раннего христианского периода отдельно стоящий пилон, как основная несущая часть, являлся «строительным модулем» сооружения памятника, то в центральнокупольном сооружении исходной точкой являлась, в основном, сущность сооружения, характеризующий его образ купол, на основе размера которого и создавалось все купольное сооружение.

4. Еще в 1955 году, говоря о выявленной в базиликальных сооружениях Армении модульной системе, мы отметили, что «строительной единицей при однефных сооружениях являлась ширина пилястра (Гарни и т. д.), а в центральнокупольных сооружениях радиус купола (Аван, Рипсимэ, Малый храм Талина, Аламан и др.). Это явление мы наблюдаем также в храме Джвари (Груз. ССР)» (Ал. Саинян. Архитектура Казахской базилики, Ереван, 1955, стр. 184. Об этом говорится и в резюме на русском языке, стр. 263. Об этом же см. А. А. Саинян. Казахская базилика. Автореферат. Ереван, 1951, стр. 19).

Эта наша точка зрения выражена также в книге С. Мнацаканяна «Архитектура армянских притворов», Ереван, 1952, стр. 128.

5. Эта точка зрения полностью подтверждается новыми материалами, добытыми раскопками в Эчмиадзинском кафедральном соборе. Во время реконструкции Эчмиадзинского кафедрального собора, произведенной в конце пятого века, были сохранены четыре пилон, созданные в начале четвертого века при Лусавориче. На них были переброшены арки подкупольного квадрата. Приняв за один модуль размер радиуса основания купола, создали на основе этого модуля всю композицию.

6. Таким образом выясняется, что эта модульная система, лежащая в основе центральнокупольных сооружений, существовала в Армении по крайней мере с 5-го века. Впоследствии этот строительный принцип появляется почти во всех центральнокупольных сооружениях Армении (также и Грузии) 6—7 веков (Аван, Рипсимэ, Малая церковь Талина, Аламан, Джвари, Атени и т. д.).

Ю. А. ТАМАНЯН  
Ереван

### **ОСОБЕННОСТИ СТРОИТЕЛЬНЫХ МАТЕРИАЛОВ, ИСПОЛЬЗОВАННЫХ В ДРЕВНОСТИ И В ПРАКТИКЕ РЕСТАВРАЦИОННЫХ РАБОТ НА ПАМЯТНИКАХ АРХИТЕКТУРЫ**

1. Армянское нагорье еще в глубокой древности служило жильем для человека. Обитающий в пещерах человек уже был знаком с камнем, который служил ему орудием труда, оружием и строительным материалом.

2. С развитием общества становится разнообразным применение различных строительных материалов (глина, дерево и др.). Появление известкового раствора произвело значительный переворот в строительном искусстве и дало возможность сократить толщину стен возводимых зданий.

3. Подразделением строительных материалов, предназначенных для фундаментов, стен, несущих конструкций, кровель и других элементов, в практике реставрационных работ, достигается более полное использование их возможностей.

4. Данные исследования физико-механических свойств, химического состава и гранулометрического анализа древних растворов, представленные соответственными таблицами, показывают, что существовали определенные правила, которые строго выдерживались.

5. Конструкция стен древних сооружений прошла сложный и долгий путь от сухой циклопической кладки, литой глины, сырцового кирпича до трехслойной. Применение известкового раствора восстанавливает трехслойность стены циклопической кладки, но уже с отесанными камнями с растворным заполнением, в котором плашмя уложены мелкие отколы камня.

6. Применение дерева, металла и ряда других материалов увеличивало прочность памятников. В практике реставрационных работ, в настоящее время, этому способствуют новые строительные материалы. Гидрофобные растворы, железобетон, синтетические смолы расширяют палитру применения новых строительных материалов.

Н. М. ТОКАРСКИЙ  
Ленинград

### УНИКАЛЬНЫЙ ПАМЯТНИК АРХИТЕКТУРЫ ИЗ РАСКОПОК 1911 ГОДА В АНИ

1. Во время X археологической кампании в Ани был раскопан холм около развалин большого минарета Абу-л-Ма'амрана, скрывавший, как оказалось, остатки разрушенной церкви. Сохранившаяся нижняя часть постройки (выс. 3,30—3,75 м) и найденные разрозненные архитектурные детали позволяют уверенно воспроизвести ее былой вид. Прямоугольник наружных стен (14,40×7,30 м) включает продолговатое помещение для молящихся, к которому с востока примыкает алтарная абсида с двумя небольшими приделами по бокам. Из продольных стен выступает по два пилон, на которые опирались четыре арки подкупольного квадрата, служившие вместе с парусами основанием круглого барабана. Купол высился над центром крестообразного верха церкви. Эти черты композиции раскопанной церкви позволяют отнести ее к типу так называемых «купольных зал», известному в Армении уже на рубеже V и VI вв. (Зовуни) и получив-

шему широкое распространение после освобождения страны от арабов.

2. Анийская церковь внешне ничем (кроме поздних контрфорсов) не выделяется среди рядовых «купольных зал», но в интерьере столь необычна и своеобразна, что вполне может считаться уникальной. Прежде всего обращает на себя внимание решительный отход строителей от общепринятой в «купольных залах» формы пилонов с прямоугольной несущей основой. Здесь каждый пилон состоит из двух массивных колонн (диам. ок. 70 см), на которых основываются две смежные арки подкупольного квадрата. Второй необычной особенностью является строение алтарной абсиды, в которой из стены выступают 9 полуколонн, образующих нечто вроде плоских ниш, увенчанных конхами, украшенными резьбой. По бокам средней колонны было два окна. Композиция отделки абсиды охватывает всю стену до свода, тогда как в некоторых других памятниках пояса ниш, врезающихся в стену, с тонкими парными полуколонками между ними занимает только нижнюю часть полукупольной.

3. Сравнение алтаря изучаемой церкви с абсидами храма Гагика I в Ани показывает, что именно его величественные колоннады были тем вдохновляющим образцом, который архитектор решил воспроизвести в собственной трактовке в сооружаемой им церкви. Влияние Гагикашена подтверждается также сходством сложной формы парусов обеих построек и ребристым сюжетом резьбы на базах пилонов, заимствованным из храма Гагика. Все это дает основание датировать церковь из раскопок 1911 года **временем не позднее первой половины XI века**, отвергнув версию о нескольких ее перестройках. Контрфорсы в восточном конце церкви приложены не ранее XIII в.

## ПЕРВЫЙ ИССЛЕДОВАТЕЛЬ СТРОИТЕЛЬНОЙ ТЕХНИКИ ДРЕВНЕЙ АРМЕНИИ

1. История строительной техники древней Армении— тема, не нашедшая монографического освещения в научной литературе. Невозможность ее выполнения во времена Т. Тораманяна, в период начала научного изучения памятников, накопления фактического материала. Приоритет ученого в освещении этой проблемы. Многочисленность сведений по истории строительной техники в его трудах. Специальная работа—«Строительные материалы и способы их использования в древней Армении» (1932), неразработанная—«Конструктивный анализ Звартноца». По Тораманяну, строительно-технические особенности сооружений (материал, техника выполнения, конструктивные элементы)—одна из важнейших основ датировки и национальной принадлежности памятника.

2. Освещение вопросов строительной техники, в основном связанных с исследованными и изученными Т. Тораманяном памятниками древнейшей эпохи и феодального периода IV—XIV вв. Привлечение сведений, описанных в трудах древних, средневековых и современных авторов (армянских и зарубежных).

Освещенные в работах Т. Тораманяна разделы строительной техники.

3. Материалы, способы их обработки и применения. Камни естественные (туф, базальт, известняк, пемза и др.) и искусственные (кирпич-сырец, обожженный кирпич, черепица), строительный лес (породы дерева), металл (железо, бронза). Растворы, их состав, качество, способы приготовления: глиняный, глино-саманный, известковый, гипсовый, бетонный. Качество составляющих раствор элементов: глина, известь, песок (речной, горный), щебенка.

4. Строительные инструменты (молотки, топоры, лопаты, пилы, кирки и др.) их форма и назначение. Строительные леса (подмости) и приспособления (носилки, сита, лестницы, рычаги, блоки и пр.).

5. Конструктивные приемы, их зависимость от материала, назначения и времени возведения сооружения. Стены—толщина, процесс кладки из кирпича и камня (перевязь швов, сердцевина стены). Перекрытия проемов (балочные, арочные) и помещений (плоские деревянные и каменные, шатровые—азарашен, согомакаш, сводчатые, купольные). Перекрытия на пересекающихся арках. Формы арок (подковообразные, полуциркульные, стрельчатые, простые и многоцентровые). Антисейсмические приемы: горизонтальные связи из дерева, фасонные швы в арках (Текор). Значение внутрестенного бутобетона. Столб Татева.

6. Организация строительного производства. Знаки мастеров. Разделение каменщиков по роду выполняемой работы. Их участие в строительстве территориально удаленных памятников.

7. Т. Тораманян—пионер в изучении истории строительной техники древней Армении.





[ 104. ]

A <sup>11</sup> / 58103

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220058103